

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ (ՔՈԼԵՋԻՑ) ՈՒՍՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը (ՀՊՏՀ) հայտարարում է միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների (քոլեջի) բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների 2018-2019 ուսումնական տարվա ընդունելություն (հեռակա ուսուցմամբ)՝ ուսումը ՀՊՏՀ հետևյալ մասնագիտություններով շարունակելու համար.

N	Մասնագիտությունը	Տեղերի քանակը (հեռակա)
1.	Հաշվապահական հաշվառում և հարկում	11
2.	Ֆինանսներ	12
3.	Կառավարում	11
4.	Մարքեթինգ	5

ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղ

N	Մասնագիտությունը	Տեղերի քանակը (հեռակա)
1.	Ֆինանսներ	2

ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղ

N	Մասնագիտությունը	Տեղերի քանակը (հեռակա)
1.	Ֆինանսներ	2

Դիմորդների փաստաթղթերն ընդունվում են 2018թ. հուլիսի 9-ից մինչև հուլիսի 20-ը և 2018թ. օգոստոսի 13-ից մինչև օգոստոսի 30-ը ներառյալ՝ ժամը 9⁰⁰ - 17⁰⁰ –ը:

Դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

1. դիմում՝ ուղղված ռեկտորին,
2. ավարտական փաստաթղթի բնօրինակ՝ դիպլոմ և դրա ներդիր,
3. ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի արձանագրության պատճեն կամ երաշխավորագիր,
4. չորս լուսանկար (3x4 չափսի),
5. անձը հաստատող փաստաթուղթ և դրա պատճեն,
6. զինվորական գրքույկ կամ կցագրման վկայական և դրա պատճեն,
7. ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնությունից օգտվելու վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ (առկայության դեպքում):

Ընդունելությունն իրականացվում է ՀՀ Կառավարության 2015թ. հուլիսի 8-ի «Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի մայիսի 20-ի N 589 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 752-Ն որոշման համաձայն:

<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=99035>

Դիմորդների փաստաթղթերի ընդունումը կատարվում է ՀՊՏՀ համապատասխան ընդունող հանձնաժողովներում, որոնք աշխատում են բոլոր աշխատանքային օրերին, ժամը 9⁰⁰ - 17⁰⁰ –ը:

- Հասցեներ՝
- ք. Երևան, Նալբանդյան 128 (ֆինանսական ֆակուլտետի 1-ին հարկ),
հեռ.՝ (+374 10) 593-473
 - ք. Գյումրի, Վ.Սարգսյան 32, հեռ.՝ (+374 312) 2-54-10
 - ք. Եղեգնաձոր, Վայքի փողոց 4, հեռ.՝ (+374 281) 2-54-10